ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՒՌՆՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնք, գ.Նուռնուս, (0222) 6-84-51nurnus.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«14» օգոստոսի 2017 թվականի թիվ 54-Ա

ՎԱՐՇԱՄ ԱՐԱՄԻ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10,11, 22.1 կետերի, 1998 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ ու 22-րդ կետերի, ,,Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով ու հիմք ընդունելով Վարշամ Արամի Ղարիբյանի՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Գարուն,, այգեգործական ընկերության թիվ 58 հասցեի հողամասում 1980 և 1990 թվականներին ինքնակամ կառուցված 87,5 ք.մ. արտաքին մակերեսով շինությունները և այգետնակը օրինականացման մասին դիմումը և այն, որ ըստ համայնքի կադաստրային քարտեզի,«Լիվակո պլյուս» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի ու տեղում կատարված ուսումնասիրության հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, որոշում եմ.

1 Վարշամ Արամի Ղարիբյանի կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Գարուն,, այգեգործական ընկերության թիվ 58 հասցեի հողամասում 1980 և 1990 թվականներին ինքնակամ կառուցված 87,5 ք.մ. մակերեսով շինությունները և այգետունը համարել օրինական:

2.Հաշվի առնելով, որ S=24,10 ք.մ.մակերեսով ավտոտնակը, 14,80ք.մ., 1,80ք.մ ու 1,10 ք.մ.մակերեսներով աստիճանավանդակները, 21,30ք.մ մակերեսով ծածկարանը, 4,40ք.մ ու 10,70ք.մ մակերեսներով օժանդակ շինությունները, 1,50քմ մակերեսով սան.հանգույցը և 7,80ք.մ մակերեսով պարիսպն ինքնակամ կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ապա նրանց օրինականացման համար վճար չգանձել:

3. Ճանաչել Վարշամ Արամի Ղարիբյանի սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նուռնուս համայնքի ,,Որց,, այգեգործական ընկերության թիվ 58 հասցեում գտնվող, ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքների 07-051-0105-0005 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0,098017հա մակերեսով տնամերձ հողամասի նկատմամբ, որը փաստացի նրա կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

4.Սույն որոշմամբ ծագող իրավունքներն ենթակա են գրանցման ԱԳԿՊԿ Մարզերի միավորված ստորաբաժանումում:

5.Հողամասին և այգետանը տրամադրել իրավաբանական հասցե. Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Նուռնուս համայնք, ,,Գարուն,, թաղամաս, 2-րդ փողոց թիվ 58:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՆԱՑԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Գ.Նուռնուս
14 օգոստոսի 2017թ.